01/10.1/2100-09

2009-04-02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հ. Հակոբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պետական նպաստների տրամադրման նպատակների շարքում, ինչպես մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի աշխատավարձի մասնակի հատուցումն է, այնպես էլ՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը։

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար նպաստի տրամադրման հարաբերությունների իրավական կարգավորման հիմքում դրված են այս երկու մոտեցումները, քանի որ ժողովրդագրական իրավիճակի բարելավումն իր մեջ կրում է նաև հեռահար նպատակ՝ աջակցել ընտանիքին՝ մեծացնելու առողջ և կրթված զավակ։ Այդ նպատակին հասնելու համար նախընտրելի է, որ երեխային վաղ մանկական տարիքում (մինչև երկու տարեկան) խնամի մայրը և ոչ թե այլ անձ։

Այս տեսանկյունից անհավասար պայմաններում կարող են գտնվել աշխատող մայրերը, որոնք նպաստ չստանալու պարագայում չեն կարողանա հրաժարվել աշխատելուց՝ եկամուտը չկորցնելու պատճառով։ Ուստի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով երիտասարդ մայրերին երաշխավորելով նրանց՝ մինչև երեխայի երեք տարեկանը լրանալը, աշխատատեղի պահպանումը, միաժամանակ պետք է նպաստավոր

պայմաններ ստեղծել նրանց համար, որպեսզի երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու հանգամանքը (երեխային անձամբ խնամելու նպատակով) ընտանիքի համար չառաջացնի ֆինանսական խնդիրներ։

Ըստ էության, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը միայն աշխատող մայրերին տրամադրելու վերաբերյալ դրույթը (2009 թվականից նաև նպաստի չափի բարձրացումը) հավասար պայմաններ է ստեղծում երեխային անձամբ խնամելու անհավասար հնարավորություններ ունեցող մայրերի համար։

Նախագծի ընդունման հիմնավորման ֆինանսական հաշվարկը՝ 2010 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պահանջվող ֆինանսական միջոցների վերաբերյալ, հեղինակի կողմից իրականացվել է՝ ելնելով միայն մեկ տարվա ընթացքում ծնված երեխաների միջին թվից։ Հարազատ մնալով հիմնավորման մեջ ներկայացված հաշվարկի մեթոդաբանությանը՝ մինչև երկու տարեկան երեխաների թվի հաշվարկի համար անհրաժեշտ է հաշվի առնել երկու տարվա ընթացքում ծնվածների միջին թիվը և 2010 թվականի համար նախատեսվող նվազագույն ամսական աշխատավարձի չափը (37370 դրամ)։

Այսպիսով, օրենքի ընդունման դեպքում, այլ հավասար պայմաններում, նպաստի իրավունք ձեռք կբերեն ոչ թե 35 հազ. ընտանիքներ, յուրաքանչյուրը՝ 18 հազ. դրամով, այլ՝ 75 հազ. ընտանիքներ, յուրաքանչյուրը՝ 22400 դրամով, և անհրաժեշտ ֆինանսական միջոցները կկազմեն ոչ թե 7 մլրդ դրամ, ինչպես նշված է հիմնավորման մեջ, այլ՝ 20 մլրդ դրամ։ Ուստի, նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ։

Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավական տեխնիկայի պահանջները՝ անհրաժեշտ է՝

1) 1-ին հոդվածում «նոյեմբերի 25-ի ՀՕ-205» բառերը փոխարինել «հոկտեմբերի 24-ի N 205-Ն» բառերով.

2) օրենքի նույն հոդվածին վերաբերող 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածները միավորել։

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առայժմ աննպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագիրը ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրում՝ ըստ տարիների՝ համապատասխան ֆինանսական միջոցներով։

Ծրագիրը դիտարկվում է նաև ժողովրդագրական քաղաքականության համատեքստում, և օրենքի նախագծում արված առաջարկությունը կքննարկվի ժողովրդագրական քաղաքակա-նության ռազմավարության իրականացման միջոցառումների շրջանակում։

Հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետու-թյան աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Համբարձումյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-533-16.02.2009-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 25-ի ՀՕ-205 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի «երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձը՝» բառերը փոխարինել «երեխային խնամող» բառերով։

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Երեխայի խնամքի նպաստի իրավունքը ծագում է աշխատող ծնողի համար նրա՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու մասին համապատասխան գործատուի հրամանն ուժի մեջ մտնելու ամսից, իսկ չաշխատող ծնողի համար՝ երեխայի ծննդյան օրվանից երկու ամիս առաջ։ Երեխայի խնամքի նպաստի իրավունքը պահպանվում է մինչեւ նրա երկու տարեկանը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ը։»։

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին՝ «անկախ գործատուի հրամանում այդ մասին նշված լինելու հանգամանքից» բառերը հանել։

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Երեխայի խնամքի նպաստը նշանակելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, տարածքային մարմինն այդ մասին պաշտոնապես տեղեկացնում է համապատասխան գործատուին, եթե ծնողը գտնվում է երեխայի խնամքի արձակուրդում։»։

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից։

Հիմնավորում

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

«2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է «Մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ»-ի ծրագիր: Ծրագիրը կազմված է 6 հազար ընտանիքների հաշվարկով, եւ կազմում է 1 մրդ 296 մլն դրամ: Հաշվարկների հիմքում դրված է նվազագույն ամսական աշխատավարձի 60%-ը՝ 18 հազար դրամ:

Նշյալ ծրագիրը, մարդու իրավունքների տեսակետից, անհավասար պայմաններ է առաջացնում աշխատող եւ չաշխատող ծնողների ընտանիքների համար:

Այդ անհավասարությունը վերացնելու նպատակով առաջարկում ենք մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ տրամադրել բոլոր երեխաներին՝ անկախ ծնողների աշխատող լինելու հանգամանքից:

Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ տարեկան ծնունդների թիվը միջինը կազմում է 40 000 (2008 թվականին այն կազմել է 41 238, իսկ 2007 թվականին՝ 40 105):

Նախատեսելով երեխայի նպաստ մոտավոր հաշվարկներով 35 000 չաշխատող ծնողների համար նույնպես, կվերացնենք ընտանիքների միջեւ անհավասարությունը:

Այդ նպատակով հարկ կլինի 2010 թվականի բյուջեով լրացուցիչ նախատեսել մոտավորապես 7 մլրդ դրամ, եթե հաշվարկների հիմքում դարձյալ դրված լինի նվազագույն ամսական աշխատավարձի 60%-ը՝ 18 հազար դրամը:

Առաջարկվող փոփոխություններով, մի կողմից կնվազեցնենք ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը, մյուս կողմից նպաստը կլինի առավել հասցեական: